ՏԵՂԵԿԱՆՔ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

«ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Լիցենզավորման մասին» 2001 թվականի մայիսի 30-ի ՀՕ-193 օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի «1. ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ» բաժնում կատարել.

1. 1-ին և 2-րդ կետերը շարադրել հետևյալ բովանդակությամբ.

«1.	Պայթուցիկ նյութերի և պայթեցման սարքավորումների արտադրություն, **ներմուծմամբ զբաղվելու գործունեություն**	ԿՄ		-	Փ	-	Ո	Հ	Վ
2.	Պայթուցիկ նյութերի, պայթեցման սարքավորումների առևտուր, **պահեստավորում, կիրառում (շահագործում)** և պայթեցման աշխատանքների կատարում	ԿՄ		-		-	Ո	Հ	Վ

2. Լրացնել 2.1 և 2.2 կետերով.

2.1.	**Հրագործական արտադրատեսակների արտադրություն, ներմուծմամբ զբաղվելու գործունեություն**	ԿՄ		-	Փ	-	Ո	Հ	Վ
2.2	**Հրագործական արտադրատեսակների առևտուր (իրացում), կիրառում (շահագործում) (բացառությամբ կենցաղային նշանակության հրագործական արտադրատեսակների) և պահեստավորում:**	ԿՄ		-		-	Ո	Հ	Վ»:

Հոդված 2. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակումից վեց ամիս հետո:

2. Մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը «Գործունեության իրականացման ծանուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված հրագործական ապրանքների արտադրության, ներմուծման կամ առևտրի իրականացման ծանուցում ներկայացրած անձը համարվում է սույն օրենքով սահմանված նույն տեսակի գործունեության իրականացման ծանուցում ներկայացրած անձ: